



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների
իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության կենտրոն

Իրականացնող՝
«Լոռու մարզի
համատիրությունների
կենտրոն» ՀԿ

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

«Վանաձորի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիթորինգ»

ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

«Վանաձորի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիթորինգ» ծրագիրը իրականացրել է «Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 597 000 ՀՀ դրամ, որից 499 000 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ-ի կողմից:

ք.Վանաձոր

2016թ.

«Վանաձորի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիթորինգ» ծրագրի հաշվետվություն

1. Ծրագրի բովանդակային հաշվետվություն

Ծրագրի իրականացման շաբաթ	Գործողություն
1-ին	Բնակարանների սեփականատերերի, բնակիչների, շենքերի կառավարման մարմինների, ՏԻՄ և ծառայություն մատուցող կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների, գրույցների միջոցով հստակեցվեցին մոնիթորինգի օբյեկտների գործունեությանն առնչվող աղբյուրները:
2-րդ	Հրավիրվեց կլոր-սեղան հանդիպում, որին մասնակցում էին ՏԻՄ ներկայացուցիչներ, համատիրությունների նախագահներ և կառավարիչներ: Հանդիպմանը ներկայացվեցին ծրագրի նպատակները, ակնկալվող արդյունքները: Հանդիպումը լուսաբանվեց Լոռիի հեռուստաընկերության կողմից, որը տեղադրված է նաև համացանցում: Տեսանյութի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=3UDzwuo4h_A :
3-5-րդ	Մոնիթորինգ պատահականության սկզբունքով ընտրված համատիրություններում: Մոնիթորինգն անցկացվեց 3 թիրախային խմբերում. 1. ՏԻՄ ներկայացուցիչներ /հարցմանը մասնակցեցին ոլորտում աշխատող 12 ներկայացուցիչներ/: 2. Համատիրությունների կառավարող մարմինների ներկայացուցիչներ /հարցմանը մասնակցեց 45 ներկայացուցիչ/: 3. Բնակիչներ /հարցմանը մասնակցեց 443 քաղաքացի/:
6- 7-րդ	Մոնիթորինգի արդյունքների վերլուծություն, որի շրջանակներում ա. Կազմվեց առաջարկությունների փաթեթ՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների կատարելագործման և վեր հանված խնդիրների հաղթահարման վերաբերյալ: բ. Կազմվեց բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնող առաջարկությունների կիրառման ճանապարհային քարտեզ:

8-րդ	Կայացավ ծրագրի արդյունքների շնորհանդեսը, որին ներկա էին մարզային, ՏԻՄ և համատիրությունների կառավարող մարմինների ներկայացուցիչներ: Շնորհանդեսին ներկայացվեց մոնիթորինգի հիմնական արդյունքներն առարկայացնող ամփոփիչ զեկույցը, և առաջարկությունների ճանապարհային քարտեզը: Մոնիթորինգի ազդեցության վերլուծությունը քննարկվեց ներկաների հետ: Մոնիթորինգի ամփոփիչ արդյունքների և առաջարկությունների ամփոփիչ փաթեթը հանրայնացվեց տեղական՝ ՄԻԳ հեռուստառնկերության կողմից: Տեսանյութի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=gCA5U7vgPXs&feature=youtu.be:
------	--

Մոնիթորինգի ամփոփիչ զեկույցը և առաջարկությունների ճանապարհային քարտեզը կցվում է սույն հաշվետվությանը՝ որպես Հավելված 1:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը կցվում է սույն հաշվետվությանը՝ որպես Հավելված 2:

«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ նախագահ,
Ծրագրի ղեկավար՝ Բերո Առաքելյան

«02» դեկտեմբեր, 2016թ.